Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 18 (402) 1-16 դեկտեմբեր, 2016թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ի խնդիր պետության ամուր հիմքերի

Մարդկային յուրաքանչյուր հավաքականություն միջանհատական հարաբերությունների հստակեցման համար իր մեջ մշակում է պայմանավորվածություններ: Այդ պայմանավորվածություններն անհրաժեշտ պայման են հավաքականության գոյատեւման համար: Պայմանավորվածությունները սահմանափակում կամ լիազորում են՝ իրավունքներ եւ պարտականություններ սահմանելով հավաքականությանն անդամակցող յուրաքանչյուր անհատի համար:

Վերը նշված կարգը եղել է մարդկության պատմության հենց այն օրից, երբ պարզվեց, որ մարդը հանրային էակ է, եւ շարունակվում է մինչեւ այժմ:

Պայմանավորվածությունները զանազան տարբերակներով են արտահայտել իրենց լինելիությունը պատմության տարբեր հատվածներում: Հավաքականությունների զարգացման ընթացքում այդ պայմանավորվածությունները կրել են նաեւ այլ անուններ, իսկ այսօր դրանց ընդհանուր առմամբ կոչում ենք օրենք: Օրենքները զանազան դրսեւորումներով են ներազդել հավաքականությունների մեջ՝ համեմվելով կրոնական հասկացողություններով, բարոյական եւ արժեքային բաղադրիչներով:

Անհրաժեշտ չէ, որ որեւէ օրենք գրավոր տեսք ունենա: Կան նաեւ չգրված օրենքներ, որոնք կարող են կոչվել զանազան անուններով, օրինակ՝ ավանդույթ: Կան նաեւ հավաքականության ավելի նեղ շրջանակի համար չգրված օրենքներ, օրինակ, այսպես կոչված, «գողական հասկացությունները»: Ինչպես ասվեց՝ հավաքականության գոյատեւման համար կարեւորը պայմանավորվածության գործադրվելն է եւ օրենքի նկատմամբ հարգանքը: Կարեւոր չէ, թե այդ օրենքը գրավոր է, բանավոր, ավանդական, թե...

Նույն օրինաչափությունը տարածվում է նաեւ պետությունների պարագային: Պետական համակարգն առաջին հերթին կանգուն է եւ գոյատեւման, զարգացման ընդունակ, եթե այդ համակարգում տիրական է օրենքը եւ օրինականությունը: Մի խոսքով՝ այն պայմանավորվածությունները, որոնք կապում են երկրի յուրաքանչյուր մասնիկին միմյանց հետ՝ բաշխելով իրավունքներ եւ պարտականություններ, հարգվում եւ գործադրվում են յուրաքանչյուր անհատի կողմից:

Ինչպես զանազան մարդկային հավաքականություններում, այնպես էլ պետության համակարգում տիրող օրենքից զանցանքի պարագայում նախատեսվում է պատիժ: Պատիժն այն բիրտ ուժն է, որը պարտադրում է հավաքականության մասնիկին՝ ենթարկվելու համընդհանուր պայմանավորվածությանը:

Իսկ ինչ է դառնում, երբ չի գործում պատժի դրույթը: Դա հավաքականության քայքայման սկիզբն է: Պատժի չգործադրվելը կարող է դրսեւորվել հազար ու մի ձեւով, օրինակ՝ օրենքի դիմաց հավասարության խախտմամբ՝ խտրականությամբ, պատժվողի հերոսացմամբ կամ անարդար վճռի կայացմամբ:

Չպետք է մատների արանքից դիտել նման երեւույթները, հատկապես՝ պետական համակարգում: Պետության հիմքերի փտախտը սկսվում է հենց օրենքի անտեսումից եւ պատժի զանցառմամբ:

3.860.000 դոլար՝ Հայ Դատի աշխատանքների համար

Դեկտեմբերի 10-ին Փարիզի կենտրոնում, Ելիսեյան պալատի հարեւանությամբ, ՀՅԴ Բյուրոյի նախաձեռնությամբ հավաքվել էին հոգեւոր, պետական, քաղաքական, կուսակցական այրեր՝ միասնաբար մասնակցելու Հայ Դատի աշխատանքների հզորացման ու աջակցության համար կազմակերպված դրամահավաք ճաշկերույթին:

Պատվո սեղանի շուրջ էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ առաջին վեհափառը, ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամներ, հոգեւոր եւ պետական այրեր:

Ողջունելով ներկաներին եւ Հայ Դատին, հանգանակությանը մասնակցած բոլոր բարերարներին՝ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանն անդրադարձավ Հայ Դատի հանձնախմբերի գործունեությանն ու նրանց վարած աշխատանքների քաղաքական ու ռազմավարական կարեւորությանը: «Հայ Դատի պայքարը անցյալի համար չէ: Հայաստանի Հանրապետության, այսօրվա Հայաստանի անվտանգության պայքար է»,- շեշտեց նա:

Բանախոսը հատուկ կարեւորեց հանգամանքը, որ Հայ Դատի համար աշխատանքները հիմնված են տեսլականի վրա՝ հանուն Հայաստանի եւ հայության. «Եթե մենք դադարենք նպատակ ունեցող ազգ լինել, մենք կոչնչանանք, կկորչի մեր էությունը: Պայքարն է, որ հայության զարգացման պայմանն է հանդիսանում»: ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի ու գրասենյակների մղած պայքարն ունի ահռելի արդյունքներ անգամ հիմա՝ շեշտեց Հրանտ Մարգարյանն ու հիշեցրեց վերջին թարմ օրինակը, երբ Ադրբեջանը բողոքում է այն փաստի դեմ, որ Ֆրանսիայի նորանշանակ ներքին գործերի նախարարը նրանց սեւ ցուցակում է հայտնվել, քանի որ ՀՅԴ Հայ Դատի նախաձեռնությամբ այցելել է Արցախ: Դրամահավաքով առավել հզորացած Հայ Դատի հանձնախմբերը շատ ավելի քաղաքական գործիչների կարող են բերել Արցախ, շատ ավելի գործ կարող են անել՝ ամփոփեց ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչը:

Արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանը ողջույնի իր խոսքում հաջողություն մաղթեց Հայ Դատի աշխատանքներին, որ ձեռքբերումներն ուղեկցեն այդ Դատի սպասավորներին:

Պայքարի սպասավորությանն ու կամավորությանն անդրադարձավ նաեւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը: «Եթե չլիներ նվիրումը, հանձնառությունը, արդյունքն էլ չէր լինի: Մենք հարուստ չենք, բայց նվիրումով, փոքր գումարով հսկա գործ է կատարվում: Մենք պետք է կարողանանք համախմբվել» արձանագրեց Վեհափառը: Նա խոսեց հայության իրավունքների պաշտպանության, Դատի հետապնդման մասին՝ հիշեցնելով, որ օրերս Սիսի կաթողիկոսանիստի վերադարձի պահանջով դիմել են Եվրադատարանի:

Ողջ հավաքի ընթացքում օրվա հանդիսավար Ստեփան Տեր-Պետրոսյանը պարբերաբար հայտարարում էր այն նվիրատվությունների մասին, որոնք կատարվում էին դահլիճում ու մինչ այդ արդեն կատարվել էին անցնող շաբաթների ընթացքում Եվրոպայում, Մերձավոր Արեւելքում, Հայաստանում (Կենտրոնական գրասենյակ) եւ միջազգային կազմակերպություններում Հայ Դատի աշխատանքների համար, հազար դոլարից ու եվրոյից մինչեւ մի քանի տասնյակ հազարանոց նվիրատվություններ, որ կատարվում էին Եվրոպայի, Մերձավոր ու միջին Արեւելքի երկրներից, Ռուսաստանից ու հատկապես Հայաստանից: Ավարտին արդեն հրապարակվեցին նաեւ մի քանի խոշորածավալ նվիրատվությունների մասին: 250 հազարական դոլարի նվիրատվություններ էին կատարել Գագիկ Ծառուկյանն ու Սամվել եւ Կարեն Կարապետյանները, 150 հազար՝ Սամվել Ալեքսանյանը, 100 հազարական՝ Միքայել Վարդանյանը, Կարեն Վարդանյանը, «Փյունիկ» հիմնադրամը, Մայքըլ Սարյանը: Արդյունքում հրապարակվեց վերջնական հանգանակված թիվը՝ 3 միլիոն 860 հազար դոլար, որը կարող է նաեւ ավելանալ առաջիկա օրերին:

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը ավարտին գոհունակություն հայտնեց դրամահավաքի արդյունքների առիթով, շնորհակալություն հայտնեց բոլոր նվիրատուներին եւ վստահեցրեց, որ այն ծառայելու է մեր ժողովուրդների իրավունքների, Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության անվտանգության բարձրացման եւ ամրապնդման գործին:

«Մենք այլ ճանապարհ չգիտենք». Բակո Սահակյանն ուղերձ է հղել

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը դեկտեմբերի 10-ին շնորհավորական ուղերձ է հղել ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի եւ Սահմանադրության օրվա առթիվ:

Ուղերձում ասված է. «Սիրելի՝ արցախցիներ, Հանրապետության իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի եւ Սահմանադրության օրվա առթիվ, տոն, որը կրկնակի թանկ ու հիշարժան է մեր ժողովրդի համար:

1991 թվականին մենք իրականություն դարձրինք մեր պապերի նվիրական իղձերն ու ձգտումները՝ հռչակելով պետական անկախություն եւ հաստատակամորեն ընթանալով ժողովրդավարական պետություն կառուցելու ճանապարհով: Այդ ճանապարհին ունեցանք անդառնալի կորուստներ, հաղթահարեցինք մեծ դժվարություններ ու փորձություններ, եւ շնորհիվ մեր ժողովրդի աներեր կամքի ու անսասան ոգու՝ կարողացանք միասնաբար արձանագրել կարեւորագույն հաղթանակներ՝ տեր կանգնելով մեր հող ու ջրին, մեր ներկային ու ապագային, որն անպայման կլինի պայծառ ու լուսավոր: Մենք այլ ճանապարհ չգիտենք:

2006 թվականին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունվեց մեր երկրի առաջին Սահմանադրությունը: Այն դարձավ ազատ, անկախ, հզոր պետություն կառուցելու մեր կամարտահայտության եւս մեկ վկայությունը, փաստեց մեր հավատարմությունը ժողովրդավարության սկզբունքներին եւ համամարդկային արժեքներին: Անգնահատելի է Մայր օրենքի դերակատարությունն Արցախի նորագույն պատմության մեջ:

Թանկագի՛ն հայրենակիցներ, մեկ անգամ եւս շնորհավորում եմ բոլորիդ պետական այս կարեւորագույն տոնի կապակցությամբ եւ մաղթում խաղաղություն ու բարօրություն ձեր ընտանիքներին եւ Արցախի Հանրապետությանը»:

Կիլիկիո կաթողիկոսությունը Սիսի կաթողիկոսարանի վերադարձի հարցով կդիմի ՄԻԵԴ

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը մտադիր է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ պահանջելով Սիսի պատմական կաթողիկոսարանի վերադարձը հայ եկեղեցուն՝ հայտնել է Կիլիկիո կաթողիկոսությունն իր ֆեյսբուքյան էջում:

Սա կլինի առաջին իրավական քայլն ընդդեմ Թուրքիայի՝ 1915-ի Հայոց ցեղասպանությունից հետո:

Ավելի վաղ նմանատիպ հայցով Կիլիկիո կաթողիկոսությունը եւ Արամ Ա կաթողիկոսը դիմել էին Թուրքիայի Սահմանադրական դատարան: Թուրքիայի արդարադատության նախարարությունը պահանջել է մերժել հայցը, ինչն էլ արվել է:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ ազգային պահանջատիրության ուղղությամբ գործնական քայլերի հեռանկարով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը կարեւորել է Սիսի կաթողիկոսարանի եւ ազգապատկան ու եկեղեցապատկան այլ կալվածքների վերադարձը հայերի խախտված իրավունքների վերականգնման համատեքստում: Անցած երկու տարում այս հայցի նախապատրաստական աշխատանքներին մասնակցել է թուրքական եւ միջազգային դատավարական օրենքների մասնագետներից կազմված հանձնախումբ՝ Արամ Ա կաթողիկոսի գլխավորությամբ:



Ներկայացված հայցը պահանջում է վերականգնել սեփականատիրոջ իրավունքը Սբ Սոֆիայի տաճարի, ինչպես նաեւ Սիսի կաթողիկոսարանի նկատմամբ, որը 1293-1921թթ. ընթացքում եղել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի նստատեղը: Հայցի բովանդակությունը շատ պարզ է, ու պահանջում է վերջնականապես վերադարձնել անշարժ գույքը, վերակառուցել այն կրոնական նպատակներով օգտագործելու համար:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը Արցախ

Պաշտոնական այցով դեկտեմբերի 8-ից Արցախում էր Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Այցի շրջանակներում հայկական զույգ հանրապետությունների նախագահները ԼՂՀ պաշտպանության նախարարությունում հրավիրել են խորհրդակցություն Պաշտպանության բանակի բարձրագույն հրամկազմի մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են բանակաշինությանը եւ սահմաններում տիրող իրավիճակին վերաբերող հարցեր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցի երկրորդ օրը՝ դեկտեմբերի 9-ին, Սերժ Սարգսյանն ու ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հայկական երկու հանրապետությունների զինված ուժերի փոխգործակցության շրջանակում, ՀՀ եւ ԼՂՀ պաշտպանության նախարարների եւ բարձրաստիճան հրամկազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել են Արցախի հարավային եւ հարավ-արեւելյան մի շարք զորամասեր ու մարտական դիրքեր, ինչպես նաեւ ներկա են եղել սպաների համար կառուցված 2 բազմաբնակարան շենքերի եւ զորանոցների բացման արարողությանը:

Պաշտպանական դիրքերում նախագահներն ունկնդրել են հրամանատարի զեկույցը, հետեւել մարտական ծառայության իրականացմանը, ծանոթացել պաշտպանական համակարգի ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքներին: Նախագահները տեղում քննարկել են զորքերի պատրաստությանն առնչվող խնդիրներ, տվել համապատասխան հանձնարարականներ: Հայաստանի Հանրապետության նախագահը պարգեւատրել է լավագույն սպաներին, պայմանագրային եւ ժամկետային զինծառայողներին՝ բարեխիղճ եւ գերազանց ծառայության համար:

Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 11-ին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի եւ ՊՆ նախարար Լեւոն Մնացականյանի հետ մասնակցել է ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման եւ հայրենանվեր գործունեության համար ԼՂՀ Պաշտպանության բանակի մի խումբ զինծառայողների եւ ազատամարտիկների թանկարժեք նվերներով խրախուսելու՝ ավտոմեքենաներով պարգեւատրելու հանդիսավոր արարողությանը: Նույն օրը նախագահ Ս. Սարգսյանը հանդիպել է նաեւ հայկական 2 հանրապետությունների մշակույթի գործիչների ներկայացուցիչների, ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանի եւ ԼՂՀ մշակույթի նախարար Նարինե Աղաբալյանի հետ, մանրամասն ծանոթացել ներկա պահին ոլորտի հիմնախնդիրներին:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ Ազգային ժողովում քննարկվում է «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը

«ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել 2016թ. նոյեմբերի 25-ին:

Դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում քննարկվել է օրենքի նախագիծը:

Մշտական հանձնաժողովներում գալիք տարվա գլխավոր ֆինանսական փաստաթղթի քննարկումը շարունակվել է մինչեւ դեկտեմբերի 7-ը, որից հետո քննարկումներն ընթացել են Ազգային ժողովի խմբակցությունների հետ:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության եւ ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի համատեղ նիստը, որտեղ քննարկվել է «ԼՂՀ 2017թ. պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, տեղի է ունեցել դեկտեմբերի 8-ին:

Նիստը վարում էին «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը եւ ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռուսլան Իսրայելյանը:

Նիստին ներկա էին ԼՂՀ ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանը, ֆինանսների նախարարի տեղակալ Գրիգորի Մարտիրոսյանը:

Խմբակցության պատգամավորները պետական բյուջեի նախագծի վերաբերյալ մի շարք առաջարկներ ու հարցադրումներ են ներկայացրել:

«Դաշնակցություն» խմբակցության պատգամավորներն առաջարկել են 2017թ. պետական բյուջեում ընդգրկել Մերձավոր Արեւելքի եւ Ավստրալիայի ԼՂՀ ներկայացուցչությունների, ՀՕՄ-ի «Սոսե» մանկապարտեզների, Արցախի մի շարք համայնքների ջրամատակարարման, ճանապարհաշինության, գյուղի զարգացման եւ այլ ծրագրերի ֆինանսական հատկացումները:

ԼՂՀ ֆինանսների նախարարը տվել է համապատասխան պարզաբանումներ եւ նշել, որ քննարկելու են ներկայացված առաջարկները:

ԼՂՀ Ազգային ժողովի փոխնախագահ, «Դաշնակցություն» խմբակցության անդամ Վ. Բալայանը 2017թ. պետական բյուջեն դրական է համարում, քանի որ 2016թ. համեմատ՝ մոտավորապես 5 մլրդ դրամով նախատեսվում է ավելացնել ինչպես եկամուտները, այնպես էլ ծախսերը: «Վերջին 8-9 տարիների ընթացքում հնարավորություն է ստեղծվել, որպեսզի տարեցտարի ավելի մեծանա բյուջեի թե եկամտային, թե ծախսային մասը, որը վկայում է մեր տնտեսության կենսունակության, մյուս կողմից՝ նաեւ այն զարգացման մասին, որ ունեցել է երկիրը վերջին տարիների ընթացքում»,- նշել է Վահրամ Բալայանը: Ըստ նրա՝ 2017թ. բյուջեն սոցիալական ուղղվածություն ունի. բավական գումարներ են հատկացվում սոցիալական հիմնախնդիրների լուծման, ծնելիության խթանման, կրթության, առողջապահության հետ կապված հարցերի լուծման ուղղությամբ:

Ի տարբերություն 2016թ. բյուջեի՝ այս տարի առավել մեծ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսության զարգացմանը: Սա համահունչ է կառավարության կողմից առաջադրված նոր տեսլականին, ըստ որի՝ հնարավորություն կստեղծվի զարգացնելու տոհմային տնտեսությունը, մսուրային անասնապահությունը, նաեւ՝ հողագործության ինտենսիվ զարգացման մեթոդներ կկիրարկվեն ԼՂՀ-ում: Դա հնարավորություն կտա արմատական տեղաշարժ գրանցել եւ մրցունակ գյուղատնտեսություն ունենալ: Այս տարվա բյուջեում բավական գումարներ են հատկացվում առաջնագծի կահավորման, քաղաքացիական բնակչության պաշտպանության հետ կապված հարցերի լուծման, զինծառայողների բնակարանային հարցերի լուծման համար: Սա եւս ողջունելի է: «Ցանկալի կլիներ, որպեսզի հետագա ժամանակահատվածում ավելի մեծ ուշադրություն դարձվեր բազմաճյուղ տնտեսության բոլոր ճյուղերի զարգացմանը, մանավանդ՝ մշակող-վերամշակող ձեռնարկությունների ստեղծմանը»,- շեշտել է պատգամավորը:

Դեկտեմբերի 15-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի հերթական լիագումար նիստում «ԼՂՀ 2017թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ զեկույցով հանդես է եկել ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը՝ ներկայացնելով 2017թ. կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական թիրախային ուղղությունները: Վարչապետն ընդգծել է, որ 2017թ. համար ՀՆԱ-ի ծավալը կանխատեսվում է հասցնել 255 մլրդ դրամի՝ ապահովելով 8% աճ:

Պատգամավորների, հանձնաժողովների եւ խմբակցությունների եզրակացություններն ու առաջարկությունները կներկայացվեն ԼՂՀ կառավարությանը, իսկ դեկտեմբերի 20-ին ԼՂՀ ԱԺ է ներկայացվելու օրենքի նախագծի վերջնական տարբերակը:

«ԼՂՀ 2017թ. պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումը եւ ընդունումը նախատեսվում է 2016թ. դեկտեմբերի 22-ին, ԼՂՀ Ազգային ժողովի լիագումար նիստում:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Թե ինչպես պետք է ամրագրել Սահմանադրության մեջ պետության տարածքային ամբողջականությունը

Ինչպես որ սպասելի էր՝ Արցախի նոր Սահմանադրության նախագծի հրապարակման պահից հասարակական լայն հնչեղություն ստացած եւ ամենաշատ քննարկվող հարցերից դարձավ, այսպես ասած, տարածքների ամրագրման խնդիրը:

Ինչպես եւ այլ դրույթներ, այս հոդվածի նոր փոփոխված տարբերակը խնդրահարույց դարձավ, եւ հասարակության մեջ որոշակի հարցադրումներ առաջացան: Փորձենք հասկանալ, թե Սահմանադրության մեջ ինչու եւ ինչպես է պետք ամրագրել, այսպես ասած, Արցախի տարածքները, իսկ եթե ավելի ճիշտ ասենք՝ Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, արդյոք դա անհրաժեշտ է եւ ինչպես է նպատակահարմար անել:

Այս հարցերին հստակ պատասխանելու համար պետք է սկսել սկզբից, այսինքն՝ փորձենք հասկանալ՝ ինչ է պետության տարածքն ընդհանրապես եւ իրավական ինչ կատեգորիա ունի: Այսպիսով, պետության տարածքը երկիր մոլորակի մի մասն է, որը գտնվում է որոշակի երկրի ինքնիշխանության ներքո: Պետության տարածքի մեջ մտնում են ցամաքը՝ իր ընդերքով, ցամաքի ջրերը եւ օդային տարածությունը: Ջրային տարածքը կազմում են ներքին կամ ազգային ջրերը եւ տարածքային ջրերը, այսինքն՝ համաշխարհային օվկիանոսի ջրերի այն մասը, որը կցված է պետության ցամաքային տարածքին 12 ծովային մղոն հեռավորության վրա: Սա պետության տարածքի ընդհանուր բնութագրումն է, այսպես ասած՝ որպես աշխարհագրական կատեգորիա: Իսկ այժմ տեսնենք, թե իրավաբանորեն ինչ նշանակություն ունի պետության տարածքը: Նախ պետք է նշել, որ տարածքը պետության հիմնական հատկանիշներից է: Որպես իրավական կատեգորիա՝ ընդունված միջազգային իրավունքում, պետության տարածքը բնութագրվում է հետեւյալ կերպ՝ տվյալ պետության ինքնիշխանության ներքո գտնվող երկրագնդի մակերեւույթի որոշակի հատված: Տարածքը այլ պետություններից բաժանվում է սահմանով: Այն ընդգրկում է ցամաքը, ներքին ջրերը, ընդերքը, տարածքային ջրերը եւ դրանց վրա գտնվող օդային տարածությունը:

Իսկ սա Սահմանադրության նախագծի նշված դրույթն է. Արցախի Հանրապետության հանրային իշխանությունն իրականացվում է այն ողջ տարածքում, որը փաստացի գտնվում է Արցախի Հանրապետության իրավազորության ներքո:

Նախքան այլ հարցերին անցնելը՝ նշեմ, որ հանրային իշխանություն տերմինը տվյալ դեպքում ոչ նպատակահարմար է: Սա, իհարկե, վերցվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, ինչը ՀՀ-ում նույնպես բազում հարցադրումներ առաջացրեց, քանի որ փաստացի պետական իշխանություն դրույթը փոխարինվել է հանրային իշխանությամբ: Սա մեզ համար նպատակահարմար չէ, քանի որ մենք պետք է նշենք մեր պետության ինքնիշխանության եւ պետական իշխանության մասին:

Ինչպես տեսնում ենք՝ պետության տարածքի նկարագրության ժամանակ հստակ ընդգծվում է պետության ինքնիշխանության մասին: Իսկ ահա մեր նոր Սահմանադրության, ինչպես նաեւ գործող Սահմանադրության մեջ չգիտես ինչու նշվում է ոչ թե ինքնիշխանության մասին, այլեւ իրավազորության մասին:

Որպեսզի ավելի հասկանալի լինի, բացատրեմ երկուսի բնույթը: Պետության ինքնիշխանությունը հակիրճ կարելի է բնութագրել հետեւյալ կերպ. իշխանության գերակայությունը ներքին գործերում եւ իշխանության անկախությունը արտաքին հարաբերություններում: Այսինքն՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների ամբողջությունը եւ գերակայությունը իր տարածքում, որը բացառում է օտար երկրների ենթակայությունը, այդ թվում՝ միջազգային հարաբերություններում:

Իսկ ինչ է պետության իրավազորությունը. դատական եւ ադմինիստրատիվ մարմինների իրավունքն է գործերի քննման եւ վճռման՝ համաձայն իրենց իրավասության: Միջազգային իրավունքում տարբերվում են տարածքային եւ անձնական իրավազորություններ: Առաջինն իրականացվում է որոշակի տարածքի սահմաններում. իր տարածքում պետությունն ունի լիարժեք իրավազորություն, բացառությամբ՝ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Անձնական կամ ազգային իրավազորությունն իրականացվում է պետության կողմից իր քաղաքացիների նկատմամբ, որոնք գտնվում են իր սահմաններից դուրս, օրինակ՝ բաց ծովում, ինքնաթիռում, տիեզերքում եւ այլն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հստակ կարող ենք ասել, որ Սահմանադրության նախագծի տվյալ դրույթն ընդհանրապես պետք է վերախմբագրել, եւ այստեղ խնդիրը ոչ թե տարածքների նշման կամ սահմանների ընդգծման հարցն է, այլեւ հենց մեր պետության պետական ինքնիշխանությանը հարցականի տակ դնելը:

Ինչ վերաբերվում է ընդհանրապես պետության տարածքների ամրագրմանը Սահմանադրության մեջ եւ դրա անհրաժեշտությանը, ապա միջազգային փորձն ուսումնասիրելով հասկանում ենք, որ պետության տարածքների ամրագրման մասին առանձին դրույթ ոչ բոլոր, նամանավանդ առաջադեմ երկրների Սահմանադրություններում է նշված: Սա կարելի է բացատրել նրանով, որ պետությունը, իրականացնելով ինքնիշխանություն, ինքնին ենթադրում է, որ դա իրականացնում է իր ամբողջ տարածքում: Անհնար է, որպեսզի պետությունն իրականացնի ինքնիշխանություն կամ նույնիսկ իրավազորություն ունենա տարածքի մի մասում: Պետությունն այդ իրավունքով օժտված է իր ամբողջ տարածքում, այդ թվում նաեւ՝ բռնազավթված տարածքներում: Սակայն որոշակի երկրներ, հիմնականում տարածքային վեճեր ունեցող, նշում են պետության տարածքային ամբողջականության եւ դրա անքակտելիության մասին:

Արդյո՞ք պետք է ամրագրվի մեր երկրի տարածքային ամբողջականությունը նոր Սահմանադրության մեջ: Միանշանակ՝ այո: Սակայն դա պետք է անել այնպես, որպեսզի վտանգի տակ չդրվի մեր երկրի տարածքային ամբողջականությունն ու պետական ինքնիշխանությունը:

Ինչպես նաեւ պետք է հստակ նշվի պետության տարածքների կարգավիճակի փոփոխության անհնարինության մասին, կամ որոշակի մեխանիզմներ նախատեսել դրա փոփոխման դեպքում, այդ թվում նաեւ՝ ադմինիստրատիվ պատկանելության համար: Այդ մեխանիզմները պետք է միանշանակորեն ներառի հանրաքվեն:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անունը կա, ամանում չկա

Ժողովրդական իմաստության այս հակընդդեմ, բայց լայն տարածում ստացած արտահայտությունը, երեւի համաձայնեք, դիպուկ բնորոշում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո ղարաբաղադրբեջանական հակամարտության խաղաղ, բանակցային կարգավորման ներկայիս գործընթացը: Ասել է թե՝ բուն բանակցային գործընթացը՝ անունը, շարունակաբար շրջանառվում է ամենատարբեր մակարդակների սեղանների շուրջ, բայց ահա այդ անվան բովանդակությունը՝ ամանը, դարձյալ շարունակաբար, մնում է դատարկ: Եվ ամեն հանդիպման ստացվում է ապշելու աստիճան տարօրինակ հավաք-հյուրընկալություն, որը միանգամայն հակասում է ինչպես, ժողովրդական արտահայտությամբ ասած, «մի կտոր աղ ու հացի» կամ, դիվանագիտական եզրույթով, բանակցելու հրավիրված բարձրաստիճան հյուրերի՝ հակամարտ կողմերի, նույնպես եւ սեղանապետերի՝ միջազգային միջնորդների, անգամ հյուրընկալ տանտերերի ազգային ավանդույթներին: Ընդ որում՝ հավաքում մթնոլորտի ջերմացման վրա ոչ մի կերպ չի ազդում ոչ սեղանապետերի եւ ոչ էլ հանդիպման վայրի փոփոխությունը:

Կարծում եմ, ամենեւին անսպասելի չէր այդ էլ քանիերորդ բանակցային ձախողումը, որ հերթական անգամ արձանագրվեց վերջերս՝ դեկտեմբերի 8-ին, գերմանական Համբուրգ քաղաքում՝ Էդվարդ Նալբանդյան-Էլմար Մամեդյարով հանդիպման արդյունքում: Այն, ինչպես հայտնի է, կազմակերպվել էր ԵԱՀԿ նախարարական հանդիպման շրջանակներում, Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (ՌԴ), Ջեյմս Ուորլիքի (ԱՄՆ) եւ Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա) մասնակցությամբ: Ի դեպ, արձանագրենք, համբուրգյան հանդիպման արդյունքը Մինսկի խմբի համանախագահների կազմում Պիեռ Անդրիոյին այս տարվա հոկտեմբերին փոխարինած դեսպան Վիսկոնտիի առաջին միջնորդական ձախողումն էր, ինչի կապակցությամբ, զուտ մարդկայնորեն, չենք կարող հեռակա կարգով ափսոսանք չարտահայտել, ըստ լրահոսի տեղեկատվության, բավական փորձառու այդ ֆրանսիացի դիվանագետին: Հուսանք, Համբուրգի հանդիպումից օրեր անց՝ դեկտեմբերի 12-ին, Բաքվում նրա ունեցած բարձր մակարդակի հանդիպումների ժամանակ հյուրընկալ կողմը գոնե մի բերան սփոփանքի խոսք հնչեցրած կլինի այդ կապակցությամբ:

Բայց բանը պարոն Վիսկոնտիի դիվանագիտական փորձառության կամ ղարաբաղյան կարգավորման գործընթացում նրա միջնորդական առաքելության անփորձության մեջ չէ բնավ: Բանը, առհասարակ, Մինսկի խմբի համանախագահության՝ հիմնախնդրի կարգավորման սկզբունքների եւ մոտեցումների մեջ է, երբ, նախ, անտեսվում ու բացառվում է երեւույթի առաջացման ու զարգացման պատմական ատաղձը՝ այդտեղից բխող բառիս բուն իմաստով անհեթեթ եզրահանգումներով եւ ուղղորդումներով (Մադրիդյան սկզբունքներ), ապա՝ երբ բացարձակ ակնհայտը դիտարկվում ու ներկայացվում է որպես անորոշ եւ անիմանալի (ադրբեջանական ագրեսիան՝ 1991-1994թթ. եւ 2016թ. ապրիլ), այնուհետեւ՝ երբ ներողամտությամբ է ընկալվում հակամարտ կողմերից մեկի լկտիության աստիճանի հասնող հանդուգն պահվածքը (շփման գծում դիտարկման մեխանիզմների տեղադրման եւ հարակից հարցերում Ադրբեջանի կոշտ դիրքորոշումը, ուժի կիրառման մշտական սպառնալիքները Բաքվից եւ դրանք իրագործելու անընդհատ փորձերը) եւ, վերջապես, երբ, իսպառ բացառելով խաղաղության պարտադրանքը, հավասարության նշան է դրվում բանակցող կողմերի (հերթական ագրեսիայի դիմելու Բաքվի եռանդուն նախապատրաստություն եւ տարածաշրջանում վերջնական խաղաղության ձգտող Երեւան) միջեւ:

Մինչդեռ, ինչպես պարզվում է, խնդիրը ԵԱՀԿ-ն չէ, այլ նրանք, ովքեր ապրիլին վերսկսեցին հակամարտությունը (թե ո՞վ կոնկրետ՝ ոչ մի խոսք): Այդ եզրահանգումը պատկանում է ԵԱՀԿ գործող նախագահ, Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերին, որ նա Համբուրգում ներկայացրել է լրագրողների հետ հանդիպման ժամանակ՝ ի լրումն շեշտելով. «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը միգուցե եւ փակուղում է, սակայն դրա մեղավորը ԵԱՀԿ-ն կամ ԵԱՀԿ նախագահությունը չէ»:

Լավ, ասենք թե՝ պարոն Շտայնմայերին արդեն այնքան էլ հետաքրքիր չէ ղարաբաղյան հիմնախնդիրը, քանզի լրացել է ԵԱՀԿ գործող նախագահի նրա լիազորությունների մեկամյա ժամկետը եւ նա հեռանում է՝ մտաբերելով լատինական այն ասացվածքը, թե՝ ես արել եմ այնքան, ինչքան կարողացել եմ, թող գա նա, ով ավելին կանի: Բայց ահա թե ինչ են ասում այն գործիչները, ովքեր դեռեւս իրենց պաշտոններին են: Խոսքս վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ գերտերությունների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներին, ովքեր նույն Համբուրգում դեկտեմբերի 8-ին ընդունել են ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ համատեղ հայտարարություն:

Եվ այսպես, կողմերին հիշեցնելով, որ կարգավորումը պետք է հիմնվի Հելսինկիի եզրափակիչ ակտի սկզբունքների վրա, մասնավորապես՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության, ժողովուրդների հավասար իրավունքների եւ ազատ ինքնորոշման վրա, փաստաթղթի հեղինակ նախարարները միաժամանակ, որպես համանախագահող երկրների նախագահների կողմից առաջարկված լրացուցիչ տարրեր, վերաշարադրում են Մադրիդյան սկզբունքների այն դրույթները, համաձայն որոնց՝ Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանի վերահսկողությանը, բոլոր տեղահանվածներին եւ փախստականներին (անկասկած, նկատի է առնվում բացառապես ադրբեջանական ազգության քաղաքացիներին) իրավունք վերապահել վերադառնալու իրենց բնակության նախկին վայրեր: Ընդ որում՝ Լեռնային Ղարաբաղն օժտվում է ժամանակավոր կարգավիճակով, որը «նրան կտա անվտանգության եւ ինքնակառավարման երաշխիքներ», իսկ Լեռնային Ղարաբաղի ապագա իրավական կարգավիճակը կսահմանվի «պարտադիր իրավական ուժ ունեցող կամարտահայտությամբ»:

Թե ինչ աստիճան անորոշ ու հեղհեղուկ են այդ տարրերը Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի կապակցությամբ, կարծում եմ, անգեն աչքի համար անգամ հստակ տեսանելի է: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին հարակից տարածքները Ադրբեջանի վերահսկողությանը վերադարձնելու խնդրի եւ բոլոր տեղահանվածների ու փախստականների (այստեղ՝ ադրբեջանցիների) իրենց բնակության նախկին վայրեր վերադառնալու իրավունքի ամրագրմանը, ապա այստեղ արդեն պարտադրանքի գործոնն է գերիշխող: Երեւի թե այստեղ են ասել՝ հոնքը շինելու տեղ աչքն են կուրացնում:

Այնուամենայնիվ, հետաքրքիր է իմանալ՝ այսպես ո՞ւր ենք գնում: Չէ, երեւի թե սխալ ձեւակերպեցի հարցս, քանզի մենք չենք գնում եւ այդպես մենք չենք ուզում գնալ, մեզ տանում են կամ փորձում են տանել, այսպես կոչված, «եվրոպական արդարադատության» եռաձի կառքով, աչքերս նախապես կապելով ինչ որ անթափանցիկ լաթով: Ուստի, փոխում եմ հարցս՝ այսպես մեզ ո՞ւր են տանում...

Միքայել ՀԱՋՅԱՆ

35 համայնքներում բարձրացվել է ուղեւորափոխադրումների փոխադրավարձը

Արցախի 35 համայնքներում ուղեւորափոխադրումների փոխադրավարձը բարձրացել է, իսկ 2-ում՝ նվազել: Նոյեմբերի 30-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի 4-րդ նստաշրջանի հերթական լիագումար նիստի ժամանակ ՀՅԴ ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը բարձրացրել էր վերոնշյալ հարցը:

«Տեղյակ չեմ՝ կոնկրետ ի՞նչ համայնքների եւ որքա՞ն թանկացումների մասին է խոսքը»,- հարցին ի պատասխան նշել էր ԼՂՀ Էկոնոմիկայի նախարար Անդրանիկ Խաչատրյանը՝ հավելելով, որ հարցը ուսումնասիրվելուց հետո ներկայացվելու է:

Ստեփանակերտի կենտրոնական ավտոկայանից, սակայն, մեզ հայտնեցին, որ փոխադրավարձերը բարձրացվել են՝ համաձայն նոյեմբերի 24-ին Էկոնոմիկայի նախարարությունից ստացված փաստաթղթի:

Նոր փոխադրավարձերը ձեւավորվել են հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կայացած մրցույթների արդյունքում՝ լիազոր մարմնի կողմից 2011 թվականի սակագների վերահաշվարկումից եւ 2016թ. հունվարին հաստատումից հետո:

«2011-2016 թթ. ահագին փոփոխություններ են տեղի ունեցել պահեստամասերի, վառելիքաքսուքային նյութերի, նվազագույն աշխատավարձերի մասով, եւ այս բոլորը հանդիսանում են սակագնի ձեւավորման բաղադրիչներ»,- նշել էր Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը:

Հունվար ամսից 5,2%-ով գազի սակագնի նվազեցմանը զուգահեռ՝ փոխադրավարձի բարձրացումը նախարարի տեղակալը կապում է մեկ տարի առաջ հաշվարկված արդյունքների հետ: «Մեկ տարի առաջ վառելիքի սակագինը բավականին բարձր էր»,- նշում է Տ. Գաբրիելյանը:

ԼՂՀ Էկոնոմիկայի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 35 համայնքից 4-ում փոխադրավարձը բարձրացել է 200, 22-ում՝ 100, 9-ում՝ 50 դրամ: Ինչ վերաբերում է փոխադրավարձի նվազմանը, ապա 600 դրամով նվազել է Քարվաճառի, 50 դրամով՝ Շուշիի փոխադրավարձը:

Արցախում տրանսպորտն անմխիթար վիճակում է, եւ այդ ուղղությամբ պետական որեւէ աջակցություն չի ցուցաբերվում: Չի բացառվում նաեւ, որ առաջիկա մրցույթներում այլ համայնքների փոխադրավարձեր նույնպես կբարձրանան:

«Սակագնի առավելագույն շեմն այնքան նվազագույն չափով է հաշվարկված, որ հսկայական փոփոխություններ փոխադրավարձերում տեղի չեն ունեցել»,- նշել է Անդրանիկ Խաչատրյանը եւ ավելացրել, որ համայնքներ տանող երթուղիների 90%-ն աշխատում են ցածր շահույթի պայմաններում:

Ուղեւորների թվի կրճատման պատճառներից է նաեւ Արցախում ապօրինի տաքսի գործունեության ծավալումը՝ պնդում են վարորդներն ու Էկոնոմիկայի նախարարության մասնագետները: Ապօրինի գործունեությունների շարքից է նաեւ որոշ վարորդների կողմից սահմանված փոխադրավարձից ավել գումար ուղեւորներից վերցնելը: Տիգրան Գաբրիելյանը նշել է, որ այս գործընթացը պետության կողմից չի վերահսկվում:

Տ. Գաբրիելյանի խոսքով՝ տրանսպորտի ոլորտում բացակայում է մրցակցությունը, ինչը փոխադրավարձի ձեւավորման կարեւոր գործոններից է: Իսկ կառավարության կողմից հաստատված երթուղիների ցանկից 6 երթուղի չի սպասարկվում՝ հենց վերը նշվածից ելնելով:

Արցախում սովորական դարձած տրանսպորտի գնի բարձրացումը լայն քննարկման եւ դժգոհության տեղիք է տվել հասարակության տարբեր շերտերում, հատկապես երիտասարդների եւ թոշակառուների շրջանում: Ինչպես հայտնեցին ԼՂՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, 2017թ. պետական բյուջեում չի նախատեսվում թոշակների բարձրացում: Չի նախատեսվում նաեւ աշխատավարձերի բարձրացում: Իսկ ուսանողների եւ թոշակառուների համար օրենքով արտոնություններ սահմանված չեն:

Նվեր Գյանջումյան, «Հադրութ Տրանս» ՍՊԸ-ի տնօրեն. Նախքան սակագների վերանայումը Մեծ Թաղեր համայնքի սակագնի առավելագույն շեմը 900 դրամ էր, փոխադրավարձը՝ նույնպես: Վերանայումից հետո առավելագույն սակագինը 1050 դրամ է սահմանվել, ես էլ մրցույթին փոխադրավարձի չափը 50 դրամ պակաս եմ ներկայացրել՝ 1000 դրամ:

Մարտունու շրջանի Աշան, Նոր շեն, Հացի համայնքները սպասարկող վարորդ Ջիվան Քոչարյան. Ուղեւորներն ուրբաթ եւ երկուշաբթի օրերին են շատ լինում: Մնացած օրերին 3 գյուղի ուղեւորներին երկուական նստարան է հասնում: Երկար տարիներ ես վնասով եմ աշխատել: Սակայն ավելի լավ է պետությունը ճանապարհները վերանորոգի, քան թե սակագին բարձրացնի, իսկ մենք էլ չնչին եկամուտ ունենալու նպատակով 100 դրամ ավել վերցնենք ժողովրդից:

Զորիկ Ղազարյան, Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքի ղեկավար. Տրանսպորտը թանկացել է ուղեւորների սակավության պատճառով: Սպասարկող կազմակերպությունները ստիպված են բարձրացրել փոխադրավարձը: Սակայն կարծում եմ, որ կատարված բարձրացման հետեւանքով ուղեւորներն ավելի կպակասեն:

Մանուշ Բալասանյան, Հադրութի շրջանի Ազոխ համայնք. Ապրելով Ստեփանակերտ քաղաքում, օգտվում եմ եւ քաղաքային, եւ համայնքային տրանսպորտից: Փոխադրավարձի բարձրացումը հիմնավորված չէ եւ անընդունելի է: Ընդորում՝ սպասարկման որակում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Նինել Դանիելյան, Ասկերանի շրջանի Խնձրիստան համայնք. Եթե չեն բարձրացվել ոչ աշխատավարձերը, ոչ էլ կենսաթոշակը, եւ չի բարելավվել սոցիալական վիճակը, ի՞նչ իրավունքով են բարձրացնում փոխադրավարձը: Առավել եւս, որ վառելիքը էժանացել է:

Թամար Սարգսյան, Մարտակերտի շրջանի Հովտաշեն համայնքի բնակիչ. Իմ աշխատանքի դիմաց չնչին գումար եմ ստանում: Իսկ համատարած բոլոր ոլորտներում ամեն ինչ թանկանում է: Սա սովորական եւ ցավոտ իրականություն է դառնում մեր երկրում:

Արտակ Իշխանյան, Մարտունու շրջանի Աշան համայնքի բնակիչ. Եթե փոխադրավարձը բարձրացրել է համագյուղացի վարորդի առաջարկով, ուրեմն նա եկամուտ ապահովելու խնդիր ունի:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Տարիների աշխատանքն ու Ստեփանակերտի թաղապետերը

Շատ հաճախ լինում են իրավիճակներ, երբ մարդկանցից տեղեկանք են պահանջում թաղապետից: Պարզելու, թե ինչ իրավական կարգավորում ունեն թաղապետերը եւ ինչ գործառույթ են իրականացնում, «Ապառաժ»-ը հարցում ուղարկեց Ստեփանակերտի քաղաքապետարան:

«Ապառաժ»-ի հարցմանն ի պատասխան՝ Ստեփանակերտի քաղաքապետարանից պատասխանեցին, որ 1983 թվականի հուլիսի մեկից ուժի մեջ էր մտել ԼՂՀ բնակարանային օրենսգրքի 20-րդ հոդվածը, որի համաձայն՝ տնային, թաղային կոմիտեները եւ հասարակական ինքնագործունեության մյուս մարմինները՝ իրենց կանոնադրություններին համապատասխան, պետական մարմիններին աջակցություն են ցույց տալիս բնակարանային ֆոնդի շահագործման եւ նրա պահպանության գործում, մասնակցում են բնակարանային ֆոնդի կառավարմանը եւ քաղաքացիների կողմից բնակելի տարածություններից օգտվելու եւ բնակելի տների պահպանման կանոնները կատարելու նկատմամբ վերահսկողության իրականացմանը: Նշված պահանջներին համապատասխան կանոնադրություններ չեն հաստատվել, իսկ ԼՂՀ բնակարանային օրենսգիրքն ուժը կորցրել է 2005 թվականի նոյեմբերի 26-ին: Չնայած բացակայում է տնային եւ թաղային կոմիտեների հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը, սակայն փաստացի՝ Ստեփանակերտի քաղաքապետի անհատական որոշումներով նշանակվում են կոմիտեների նախագահներ, որոնք անհատույց աջակցում են տեղական ինքնակառավարման մարմնի լիազորությունների իրականացմանը եւ պարտականությունների կատարմանը:

Պարզվեց, որ Ստեփանակերտում գործող թաղապետերը որեւէ իրավական կարգավորում չունեն: Բայց, ի զարմանս մեզ, որոշ թաղապետերի մոտ առկա է կնիք:

Ստեփանակերտում ինչպես բնակելի շենքերի, այնպես էլ սեփական տների թաղամասերում գործում են թաղապետեր: Ալեք Մանուկյան 6 եւ 8 շենքերի թաղապետ Ֆլորա Ավանեսյանը, մոտ 25 տարի է, ինչ կատարում է այդ աշխատանքը: Իր խոսքով՝ թաղապետի պարտականությունների մեջ մտնում է բնակիչներին տալ տեղեկանք, կամ էլ, եթե լինում են դիմում-բողոքներ, ներկայացնել համապատասխան վայր: Շատ հաճախ տեղեկանքներն անհրաժեշտ են լինում այն մարդկանց, ովքեր գրանցում չունեն տվյալ հասցեում: Թաղապետը տալիս է համապատասխան տեղեկանք, որի համաձայն՝ նշված անձը անկախ գրանցման վայրից ապրում է ուրիշ հասցեում: Ֆլորա Ավանեսյանի հավաստմամբ՝ թաղապետի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ քաղաքապետարանն ամբողջությամբ չի կարող տեղեկանալ քաղաքում ապրող բոլոր մարդկանց մասին, իսկ թաղապետը կարող է օգնել, տեղեկացնել, խնդրին լուծում տալ: Իսկ 82-ամյա Լյուդվիգ Հայրիյանն Ալեք Մանուկյան 9, 11 եւ 13 շենքերի թաղապետն է արդեն 40 տարի: Ըստ զրուցակցիս՝ նախկինում թաղապետի անհրաժեշտությունը կարեւոր էր, քանի որ բոլոր հարցերով բնակիչներին իրազեկում էին, քննարկում նրանց հետ, իսկ այսօր ամեն մեկն իր համար է որոշում կայացնում: Մեկ-մեկ թաղապետերին հիշում են նաեւ ընտրությունների ժամանակ՝ հավաքներ կազմակերպելու, մարդկանց ընտրական գործընթացին տեղեկացնելու:

Ալեք Մանուկյան փողոցում տասը թաղապետերից ութը կանայք են: Լյուդվիգ Հայրիյանը հաստատեց, որ մեր օրերում ավելի շատ կանայք են, բայց թե ինչ հանգամանքով է պայմանավորված՝ դժվարացավ պատասխանել: Զրուցակցիս խոսքով՝ միշտ էլ ծագել են հարցեր, թե ինչու է այդքան տարիների աշխատանքը կատարվում առանց վճարի: Ապա ավելացրեց, որ նախորդ տարվանից այդ հարցը շոշափվում է, սակայն մինչ այսօր փաստացի որոշում չկա: Վերջինս նաեւ նշեց, որ ժամանակ առ ժամանակ բնակիչների հետ կազմակերպվում են հավաքներ եւ շենքերի բոլոր բնակիչներն էլ նրան ճանաչում են որպես թաղապետ: Թե՛ Լյուդվիգ Հայրիյանը եւ թե՛ Ֆլորա Ավանեսյանը հավելեցին, որ տեղեկանքի վրա որեւէ կնիք չեն դնում, կնիքը տալիս են սեփական տների թաղամասերի թաղապետերին: Էլմիրա Դաբաղյանը Բաղրամյան, Բաբաջանյան, Հովհաննես Լազարեվա, Նաբերեժնայա 1-30, Արթուր Մկրտչյան թաղամասի առաջին, երկրորդ եւ երրորդ նրբանցքների բոլոր սեփական տների թաղապետն է: Վերջինիս խոսքով՝ 2008



թվականի մայիս ամսից է կատարում այդ աշխատանքը: Ըստ Էլմիրա Դաբաղյանի՝ իր տրամադրության տակ եղած կնիքով կնիքում է տեղեկանքները: Իսկ կնիքների բլանկները տրամադրում է Ստեփանակերտի քաղաքապետարանը, որի վրա նշված է լինում «ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարան»: Հարցման մասնակից երեք թաղապետերն էլ նշեցին, որ որեւէ չափանիշներ պետք չեն եղել այդ պաշտոնի համար:

Հարցական է մնում՝ արդյոք ոչ իրավական դաշտում ձեւավորված կառույցը կարող է իրավական ուժ ունեցող փաստաթուղթ տրամադրել, եւ ինչպես է պետական մարմիններում կամ բանկերում ընդունվում այդ փաստաթուղթը:

Անի ԱՎԱՆԵՍՅԱՆ

Թալիշ՝ մոխիրներից հառնող փյունիկ-թռչուն

Թալիշը կամաց-կամաց վերակենդանանում է իր վերադարձող բնակիչներով, գյուղի ավերված պատերը կրկին շունչ են առնում: ԼՂՀ Կառավարության որոշմամբ՝ ենթակառուցվածքների վերականգնման որոշակի աշխատանքներ են կատարվել. գյուղի կենտրոնական մասն արդեն լուսավորություն ունի, հոսանքով ապահովելու աշխատանքները շարունակվում են, գյուղն ապահովված է ջրով, ինտերնետ կապով: ԼՂՀ կառավարության՝ Թալիշի վերաբնակեցման ծրագրի կապակցությամբ լինելով գյուղում, զրուցեցինք համայնքի ղեկավար Վիլեն Պետրոսյանի հետ: Համայնքի ղեկավարը նշեց, որ գյուղի վերաբնակեցումը կատարվում է կամավոր հիմունքներով: Նա շեշտեց, որ պետք է այնպիսի պայմաններ ստեղծվեն, որ գյուղացիներն իրենք ցանկանան գյուղ վերադառնալ: Նախկին դպրոցի վերականգնման աշխատանքները դադարեցվել են. նպատակահարմար չէ երեխաներին այնտեղ տանել: Գյուղապետարանը, որն ավելի խորքում է, որոշակի աշխատանքներ կատարելուց հետո հարմարեցվելու եւ դառնալու է դպրոց: Կկառուցվի գյուղապետարանի նոր շենք, հանդիսությունների նոր սրահ, ապա կանդրադառնան մանկապարտեզի շինարարությանը: Իհարկե, կսկսվի բնակարանային նախկին ֆոնդի վերակառուցումը, ինչպես նաեւ նոր թաղամասերի կառուցումը: Նախագծա- նախահաշվային աշխատանքները կատարվելու է Մոսկվայից հատուկ հրավիրված ճարտարապետ Ռուբեն Սաֆրազբեկյանի ղեկավարությամբ, ով 30 տարի ապրել ու աշխատել է այնտեղ: Ճարտարապետներ են հրավիրվել Երեւանի Ճարտարագիտական համալսարանից, ընդգրկված են նաեւ տեղացի ճարտարապետներ:

«Այսօրվա դրությամբ քանի՝ մարդ է բնակվում գյուղում»,- մեր հարցին՝ համայնքի ղեկավար Վ. Պետրոսյանը պատասխանեց, որ գյուղ են վերադարձել 13 հոգի, հիմնականում՝ տղամարդիկ:

Ոմանք կընդգրվեն շինարարական աշխատանքներում, որոշները՝ նախկին ազատամարտի վետերաններ, ցանկություն են հայտնել ծառայել բանակում, ոմանք էլ կընդգրկվեն դիրքերի ամրապնդման գործընթացում: Կան վարպետ-շինարարներ, որոնք կընդգրկվեն շինարարական աշխատանքներում եւ այլն: Նպատակ կա՝ կանանց աշխատանքով ապահովելու համար գյուղում կառուցել նաեւ «Ղարմետաքսկոմբինատ»-ի արտադրամաս: Սահմանամերձ գյուղերի բնակիչները կազատվեն նաեւ տեղական տուրքերի վճարումներից:

Մինչ ապրիլյան դեպքերը գյուղն ունեցել է 500-ից ավելի բնակիչ: Այժմ Ղարաբաղում կա 270 թալիշցի՝ 74 ընտանիքով, շուրջ 240-ն ապրում են Հայաստանի Հանրապետությունում: Վերջերս Դրմբոն գյուղում ապրելու ցանկություն է հայտնել Չարենցավանից վերադարձած թալիշցի 7 հոգանոց մի բազմազավակ ընտանիք: 2017թ. փետրվարին նրանց ընտանիքում կծնվի 6-րդ երեխան, ընտանիքի հայրն էլ արդեն ապահովված է աշխատանքով: ՀՀ-ից 20 ընտանիք եւս ցանկություն է հայտնել վերաբնակվելու. նրանք սպասում են Ալաշանում ժամանակավոր կացարանների տեղադրմանը: Արարատի շրջանից մոտ օրերս կտեղափոխվի 2 շնչից բաղկացած մի ընտանիք. մի խոսքով՝ հայրենադարձության գործընթացը շարունակվում է: Կան ընտանիքներ, որոնցում տան տղամարդն ապրում է Ղարաբաղում, իսկ ընտանիքը, հարմարություններ չունենալու պատճառով, դեռեւս Հայաստանում է: Համայնքի ղեկավար Վ. Պետրոսյանն ասաց, որ շարունակվող կրակոցները արգելք չեն թալիշցու համար, քանի որ թալիշցին սովոր է այդ կրակոցներին: Գյուղի անվտանգության ապահովման աշխատանքները շարունակվում են, եւ համայնքի ղեկավարը վստահ է, որ բոլոր թալիշցիներն, ի վերջո, կհավաքվեն հայրենի հարկի տակ:

Ճարարապետների նախագծած հատակագծով գյուղը վերակառուցումից հետո կունենա ժամանակակից ավանի տեսք՝ իր բոլոր ենթակառուցվածքներով: Այդ նպատակով Թալիշում է կառավարության լիազոր ներկայացուցիչ Լեւոն Ապրեսյանը, համարյա ամեն օր այցելում է ԼՂՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Վիտալի Բալասանյանը, այստեղ են ճարտարապետների խումբը, շինարարները, գյուղապետն է հաճախակի այցելում Ալաշանից, այնպես որ՝ գյուղն աստիճանաբար վերակենդանանում է, եւ հաջորդ սեպտեմբերի մեկին այստեղ կհնչի դպրոցական զանգը:

Այսպիսին է հայի մաքառման բանաձեւը՝ ամեն անգամ մոխիրներից հառնել՝ ինչպես փյունիկ-թռչուն:

Լ. ԲԱՂՐՅԱՆ

ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի մամլո ասուլիսը Թալիշում

Դեկտեմբերի 9-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Ռուբեն Մելիքյանը Թալիշում մամլո ասուլիս է հրավիրել եւ հրապարակել միջանկյալ զեկույց ապրիլյան պատերազմի օրերին Ադրբեջանի վայրագությունների մասին: Մամլո ասուլիսին մասնակցում էին ՀՀ եւ ԼՂՀ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

2016թ. ապրիլին Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների առաջին իսկ օրը Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հանձնառություն է ստանձնել միջազգային հանրությանը ներկայացնել ադրբեջանական զինուժի կողմից կատարված դաժանությունների եւ միջազգային իրավունքի կոպիտ խախտումների փաստերը:

2016թ. մայիսի 11-ի որոշմամբ հանձնառել է իրականացնել փաստահավաք առաքելություն, որը ներառում է փաստահավաք այցերը, ականատեսների հետ հարցազրույցները եւ հարցումները պետական մարմիններին:

Փաստահավաք առաքելության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել առանձին զեկույցով անդրադառնալ մարդու իրավունքների երաշխավորման տեսանկյունից հատուկ կարեւորություն ունեցող հարցի, այն է՝ ադրբեջանական զինված ուժերի վարքագիծը իրենց վերահսկողության ներքո հայտնվածների նկատմամբ:

«Զեկույցում առանձին ներկայացվում են ադրբեջանական զինված ուժերի կարճաժամկետ կամ երկարաժամկետ հսկողության ներքո հայտնված, ընդհանուր թվով՝ 31 անձանց կամ նրանց մարմինների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի վարքագծին վերաբերող հարցերը: Ներկայացվում է նրանցից յուրաքանչյուրի մահվան հանգամանքները, Ադրբեջանի հսկողության տակ հայտնվելու եւ նրանց մարմիններն Արցախի հսկողությանը վերադարձվելու հանգամանքները, ինչպես նաեւ նրանց նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի կողմից կիրառված դաժանությունները: Նշված փաստերը ներկայացվում են երեք աշխարհագրական ուղղություններով՝ յոթ առանձին միջադեպերով»,-նշել է ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանը:

Զեկույցի հետեւությունները հիմնված են ինչպես Արցախում իրականացվող քրեական վարույթի նյութերի, Արցախի մարդու իրավունքների պաշտպանի եւ աշխատակազմի կողմից անմիջականորեն ընկալված փաստերի, այնպես էլ ադրբեջանական աղբյուրներում հրապարակված նյութերի վրա:

Զեկույցում նաեւ անդրադարձ է կատարվում հանցանք կատարածների եւ նրանց հրամանատարության իրավական պատասխանատվության հարցերին, ինչպես նաեւ ներկայացված փաստերը քննելու եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու՝ Ադրբեջանի միջազգային-իրավական պարտավորությանը:

«Մեր եզրահանգումներն են, որ ապրիլյան պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերը կատարել են խոշտանգման, մահվամբ պատժման եւ մարմինների անարգման պատերազմական հանցագործություններ, եւ դրանք կրել են համակարգված ու կազմակերպված բնույթ, քանի որ կատարվել են Ադրբեջանի զինված ուժերի բոլոր ստորաբաժանումների կողմից՝ ապրիլի 2-ին նրանց վերահսկողության տակ հայտնված տարածքների ԼՂՀ քաղաքացիների եւ զինծառայողների նկատմամբ,- շեշտել է ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանը եւ ընդգծել,- Մենք սա հնչեցնում ենք որպես ահազանգ միջազգային հանրության համար, եւ ներկայացված խախտումները դեռեւս պիտի արձագանքի արժանանան միջազգային կառույցների կողմից»:

Միջազգային հանրությանը զեկույցը հասանելի դարձնելու վերաբերյալ հարցին ի պատասխան՝ Ռուբեն Մելիքյանը նշել է, որ ընդհանուր եւ թիրախային բոլոր հնարավորություններն օգտագործելու են զեկույցը տարածելու համար:

Զեկույցն անգլերեն լեզվով է, այժմ աշխատում են ռուսերեն տարբերակի վրա այն կուղարկվի մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող բոլոր կազմակերպություններին, այդ թվում՝ Ադրբեջանում մարդու իրավունքների պաշտպանության կառույցներին:

ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդգծել է, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից նոր քայլ է կատարվել եւ մանդատի շրջանակներում կբարձրացնեն աշխատանքների արդյունավետությունը, քանի որ Ադրբեջանի հայատյացության, հակամարդկային մթնոլորտը հաշվի առնելով՝ մենք ապահովագրված չենք նոր հանցագործություններից:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Երբ դժվարություններից չես երկնչում

Շարժման ակունքներում կանգնած մեր տղաներն այնքան մաքուր ու անշահախնդիր են, որ նրանց հետ առնչվելիս նոր լիցքեր ես ստանում ու մտածում. ահա այսպիսի տղաներով է մեր երկիրը կանգուն մնում ու դիմանում բոլոր փորձություններին: Նրանց որդիները՝ այսօրվա մեր դիրքապահները, ոգեշնչված հայրերի՝ 90-ականների սխրանքներով, ոչ միայն ետ չմնացին իրենց հայրենասիրական բարձր հատկանիշներով, այլեւ հաճելիորեն զարմացրին ողջ հայությանը՝ ստիպելով մոռանալ բոլոր այսրոպեական տարաձայնությունները: Ուրեմն, հող հայրենին հուսալի ձեռքերում է..

Կամո Միրզոյանն առաջին նվիրյալների շարքերում էր: 1990 թվականին դեռ խորհրդային կայսրապետությունը կանգուն էր, եւ Կամոյին էլ բոլորի պես զորակոչեցին խորհրդային բանակ. Սոչիում պիտի ծառայեր: Սակայն նա այն տղաներից չէ, որ հանգիստ ծառայեր, երբ Արցախն էր վտանգված: Վեց ամիս հետո՝ 1991-ի կեսերին փախավ խորհրդային բանակում ծառայությունից, միացավ կռվող տղաներին: Խնածախ գյուղում 2 կամավորական ջոկատ էր կազմավորվել, ինքը միացավ Արմեն Ավագյանի հրամանատարությամբ կազմավորված Դաշնակցության ջոկատին եւ առաջին մարտը, որին մասնակցեց, Ջամիլլուի մարտն էր՝ 91-ի դեկտեմբերի 26-ին: Այդ հենակետն իսկական չարիքի էր վերածվել Ստեփանակերտի համար: Ջամիլլուի կրակակետն անհապաղ լռեցնել էր պետք, որին էլ ձեռնամուխ եղավ Խնածախի կամավորական ջոկատը եւ պատվով դուրս եկավ առաջին փորձությունից: Դրան հետեւեց Բերքաձորի (Հասանաբադ) համար մղված մարտը, Մալիբեյլուի վնասազերծումը: Հետո, 1992 թվականի փետրվարի 26-ին մասնակցեց Խոջալլուի մարտերին. օդանավակայանի աջ կողմով մարտեր մղելով մտան Խոջալլու: Այնուհետեւ Կամոն մասնակցեց Սառնաղբյուր (Աղբուլաղ) գյուղի ազատագրման մարտերին, որտեղ մնացին մինչեւ ապրիլի կեսերը: Հետագա խոշոր ռազմագործողությունը Շուշիի ազատագրման ռազմագործողությունն էր, որին գյուղի վաշտը մասնակցել է, այսպես կոչված, 26-րդ պահակակետից, որը տեղակայված էր Կրկժանից վեր: Կամավորական փոքր ջոկատները միավորելու անհրաժեշտություն կար, եւ Այգեստանի, Լուսաձորի ու Խնածախի ջոկատները միավորվեցին մեկ միասնական վաշտի մեջ: «Մի քանի անգամ հետախուզության ենք դուրս գալիս Ջանհասան-Քյոսալար ուղղությամբ, ապա 1992 թվականի մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը սկսում ենք ռազմագործողությունը. մեկ ժամվա ընթացքում 3 բարձունք ենք գրավում՝ ուշադրությունը Շուշիից մեզ վրա սեւեռելու նպատակով: Այդ ընթացքում Այգեստանի ջոկատը 3 վիրավոր եւ մեկ զոհ է տալիս, Լենինականի ջոկատից էլ, շրջապատման մեջ ընկնելով, զոհվում են 13 հոգի: Թուրքերը մեզ վրա մեծ ուժեր են կենտրոնացնում, եւ ստիպված ետ ենք նահանջում: Հաջորդ օրը՝ մայիսի 9-ին, համալրում ստանալով, «Պանուր» կոչվող սրբավայրից նորից հարձակման ենք անցնում՝ հետ վերադարձնելով հանձնած 3 բարձունքներն ու սկսում շարժվել դեպի թուրքական Քյոսալար գյուղը: Դրանից հետո Խայփալու գյուղով մայիսի 17-ին մտնում ենք Ծռլան եւ 7-8 գյուղ մաքրելով, առաջ ենք շարժվում: Նույն օրը մտնում ենք Բերդաձորի ենթաշրջանի 10 Վերստ կոչվող գյուղը: Լաչին մտնելիս մի հետաքրքիր դեպք պատահեց. մեր վաշտը հանդիպեց մի «Կամազ» մակնիշի ավտոմեքենայի՝ լիքը սննդամթերքով ու զինամթերքով, կողքին էլ խորոված: Հենց նոր էին թուրքերը խուճապահար թողել-հեռացել. խորոված էլ չէին հասցրել ճաշակել, մեզ բաժին հասավ»:

Լաչինում արդեն մեր տղաները Հայաստանի հետ կապող այդ ստրատեգիական կարեւորություն ունեցող հաղթանակն էին տոնում: Սակայն թուրքերը, Շուշիի անհաջողությունից կատաղած, Աղդամի ուղղությամբ մեծաքանակ ուժեր կենտրոնացնելով, հունիսի սկզբներին հարձակվում են Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ-Սառնաղբյուր-Արանզամին-Փրջամալ գյուղերի ուղղությամբ: Ասկերանի կամրջից մի քանի մետր հեռավորության վրա, այնտեղ, ուր գետը բաժանվում է երկու մասի, ուժեղ հոսանքը քշում-տանում է հրամանատար Արմեն Ավագյանին: Ուժերի անհավասարության պատճառով թուրքերին հաջողվում է տիրանալ վերոնշյալ սահմանամերձ գյուղերին: 3-4 ամիս շարունակ այդ գյուղերը թշնամու տիրապետության տակ էին: Նախիջեւանիկը 2 անգամ ձեռքից-ձեռք է անցնում, սակայն, ի վերջո, հաջողվում է ազատագրել մեր 4 գյուղերը: Կամոյենց վաշտը հիմնականում Ասկերանի պաշտպանության վրա էր կենտրոնացած, որ հանկարծ թուրքերին չհաջողվի ճեղքել պաշտպանությունը:

93-ի փետրվարին շարժվում են Ուղտի մեջք կոչվող տեղանքի վրա: Արմեն Ավագյանի զոհվելուց հետո գյուղի ջոկատի հրամանատար է նշանակվում Կամոյի ավագ եղբայր Սամվել Միրզոյանը: Մարտը սկսում են առավոտյան վաղ, մոտ 20-25 հոգի իրենց հարեւան գյուղերից մարտի մեջ էին մտել: Կամոն խոշոր տրամաչափի գնդացիրով էր կռվում: Մարտի ամենաթունդ պահին դիպուկահարը նկատում է իրեն, նրա արձակած գնդակից ինքը վիրավորվում է: Երբ հրամանատար եղբորն ասում է վիրավորվելու մասին, եղբայրը կարծում է, թե կատակում է, կատակին կատակով է պատասխանում՝ «Քեզ գնդակ չի կպնի»: Սակայն տեսնելով, որ Կամոն իսկապես վիրավորվել է, շտապ օգնության է հասնում: Այդ ընթացքում թուրքերն անընդմեջ վրա էին տալիս: Կամոյին մարտի դաշտից մի կերպ դուրս բերելով, տեղափոխում են Ասկերան: Առաջին բուժօգնությունը ցուցաբերելուց հետո տեղափոխում են Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալ: Երբ ուզում էին մնացած վիրավորների հետ իրեն էլ ուղղաթիռով տեղափոխել Երեւան, բժիշկներից մեկն ասաց, որ ամենաթեթեւ վիրավորն ինքն է: Սակայն ոտքը վիրահատելուց հետո վատ մշակման հետեւանքով մանրէներ են անցնում վերքի մեջ, եւ սկսվում է գազային փտախտ: Կամոյին տեղափոխում են այն ժամանակվա մարզային հիվանդանոցը: Մի ծանոթ բուժքույր ասում է, որ վրացի մի լավ վիրաբույժ է եկել, թող տանեն, ցույց տան: Հենց այդ վիրաբույժն էլ Կամոյի վերքն ուսումնասիրելով՝ ասում է, որ աջ ոտքը պիտի լրիվությամբ անդամահատվի. կյանքը փրկելու միակ ելքն այդ է: Երիկամներն արդեն չէին աշխատում: Գյուղի տղաները հերթ էին կանգնել՝ Կամոյին արյուն տալու համար: Միայն 27 լիտր արյուն փոխներարկելուց հետո հաջողվում է փրկել նրա կյանքը: Քանի որ շատ խորքից է ոտքը կտրված, պրոթեզավորումն անհնար է:

Սակայն Կամո Միրզոյանը շարունակում է ապրել լիարժեք կյանքով. Խնածախ գյուղի Դաշնակցության խմբի անդամ է, ազատամարտիկների միության նախագահը: Ապրիլյան դեպքերի ժամանակ 3-4 օրով մարտական հերթապահություն էր անում դիրքերում:

Կնոջ՝ Լիլիթի հետ երջանիկ ընտանիք են կազմել: Լիլիթը պատմեց, որ 9-րդ դասարանում են ծանոթացել Կամոյի հետ: Երբ ցանկանում էին ամուսնանալ, իր ընտանիքում ասացին, որ ճիշտ է, Կամոն հաշմանդամ չի ծնվել, բայց իր համար դժվար կլինի ապրել մի ոտքը կորցրած տղամարդու հետ: Սակայն ինքը չընկրկեց: Տնային հարցերում մինչեւ հիմա էլ կեսրայրն է օգնում: Երեխաներն արդեն մեծ են, աղջիկն ամուսնացել է Երեւանում, իսկ տղան պայմանագրային զինծառայող է:

ԼՂՀ սոցապ նախարարության «հաշմանդամներին աշխատանքի տեղավորելու» ծրագրով Կամոն սեպտեմբերի մեկից աշխատանքի է անցել ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության Ճգնաժամային կառավարման կենտրոնում՝ որպես հակակարկտային կայանի օպերատոր: Կյանքից դժգոհ չէ, միայն թե խաղաղություն եւ արդարություն լինի երկրում:

Լիլիա ԲԱՂՐՅԱՆ

Արման Ստեփանյան. Գաղափարի մարտիկը

Դեկտեմբերի 5-ին ՀՅԴ Արցախի երիտասարդական միության «Արման Ստեփանյան» խմբի նախաձեռնությամբ կայացավ հանդիպում Արման Ստեփանյանի ընտանիքի անդամների եւ ընկերների հետ:

Արմանը բացառիկ ազնվության ու նվիրվածության մարմնացում էր, հայրենիքի, գաղափարի նորօրյա մարտիկ: Ինչպես ընկերներն են նշում՝ նրա մասին խոսելը շատ դժվար է, բայց եւ՝ հաճելի: Անսահման հավատարմություն, սեր ու մաքրություն կար նրա մեջ, որը մեր օրերում հազվադեպ է հանդիպում:

ՀՅԴ ԱԵՄ-ի ներկայացուցիչ Վահրամ Հովսեփյանը ընկերոջը հիշում է ժպիտը դեմքին, միշտ դրական լիցքերով ու տրամադրվածությամբ:

«Թվում է, թե մարդ պիտի ինչ-որ արտառոց բան կատարած լինի, որ կոչվի հերոս: Արմանը հենց ապրելով էր հերոս: Ապրելով՝ բավականին փորձություններ, դժվարություններ ենք հաղթահարում: Արմանն ապրելու սիրահար էր, եւ ապրելուց, ընկերությունից, ընտանիքից հաճույք էր ստանում»- նշում է Արմանի ընկեր Հմայակ Դադամյանը:

Շրջապատի համար Արմանն օրինակելի չափանիշ էր, շատ ծանր էր տանում ցանկացած անարդարություն ու կեղծավորություն:

Արման Ստեփանյանը ե՛ւ ՀՅԴ Արցախի երիտասարդական միության, ե՛ւ ուսանողական միության ակտիվ անդամ էր: Ամեն ինչում առաջամարտիկ էր, դրոշակակիր: Դաշնակցական գործիչներից հիանում էր հատկապես Վանա Իշխանի (Պողոսյան Նիկոլ) գործունեությամբ (ծնվել է 1883 թ. Շուշիում, դավադրաբար սպանվել 1915թ. Շատախի գավառի Հիրճ գյուղում):

«Բռնած յուրաքանչյուր գործ կատարում էր մեծ նվիրվածությամբ, այնպես, որ ոչ ոք չէր կարող առաջն առնել. նաեւ ճարպիկ էր ու ֆիզիկապես կոփված»,- հիշում է Վահագն Դադայանը:

«Արման Ստեփանյանն իր կյանքի կարճ, բայց բովանդակալից տարիներն ապրեց նվիրումով՝ իր հայրենիքին, իր որդեգրած գաղափարին, իր ընտանիքին: Մեր բոլորի հուշերում նա կմնա որպես բարի, ազնիվ, գաղափարական անձնավորություն»,- Արմանի մասին այսպես է արտահայտվել ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ անդամ Ժիրայր Շահիջանյանը:

ՀՅԴ «Ն.Դուման» կենտրոնում կազմակերպված հուշ-երեկոյին ներկա էին Արման Ստեփանյանի կինը՝ Էլենը, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամներ Ժիրայր Շահիջանյանը, Վահագն Դադայանը, գաղափարական ու մարտական ընկերներ, երիտասարդական միության անդամներ:

Արման Ստեփանյանը 3 զավակների հայր է, զոհվել է 2015 թ. սեպտեմբերի 4-ին, մարտական խնդիր կատարելու ժամանակ՝ հակառակորդի ձեռնարկած գործողության հետեւանքով: Զավակները՝ Ավետը, Անդրանիկը եւ Անին հորը շատ են կարոտում, բայց մտածում են՝ ծառայության մեջ է. զինվորներին պահում է, ժամանակ չունի տուն գալու: Արմանի սարքած փայտե հրացանը զավակներն իրարից խլում են. «Թող մծանանք, քինանընք պապուն քյոմագ անինք»:

Արմանի գաղափարներն ու համոզմունքները առարկայական գործերի վերածվեցին Պաշտպանության բանակում՝ ծառայության տարիներին: Դիմումով խնդրել է իրեն առաջնագիծ տեղափոխել: Հոգեբանն էր, բայց մասնակցում էր մարտական ցանկացած առաջադրանքի, անվախ մի դիրքից մյուսն էր տեղափոխվում:

Նրա հետ ծառայած զինվորները, սպաները անհուն հարգանքով ու սիրով էին լցված նրա նկատմամբ:

Իր ապրած 33 տարիների ընթացքում Արման Ստեփանյանն այնպիսի կենսագրություն կերտեց, որը հիացմունքի եւ նվիրումի օրինակ կարող է լինել սերունդների համար:

Ոգու հերոսացումը պարզապես անպատմելի է ու անթարգմանելի: Նահատակ

զինվորները ներկա են, մեր կողքին միշտ զգում ենք նրանց ներկայությունը, փորձում փնտրել մեր օրերի մարդկանց մեջ, տեսնել նրանց հայացքը, աչքերը: Ախր նրանք միշտ էլ ապրել, ապրում եւ ապրելու են: Փա՛ռք ու պատիվ հանուն հայրենիքի հերոսացած հայորդիներին:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Մտորումներ կրթական համակարգի եւ քաղաքականության շուրջ

Արցախի կրթական համակարգի խնդիրների, կնոջ քաղաքական ու կուսակցական գործունեության մասին «Ապառաժ»-ը զրուցեց ԼՂՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպրոտի հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ Սիրանուշ Սարգսյանի հետ:

- Հարգելի Սիրանուշ, աշխատանքի բերումով հաճախակի եք առնչվում կրթական համակարգին եւ առկա խնդիրներին: Ըստ Ձեզ՝ ո՞րոնք են մեր կրթական համակարգի հիմնախնդիրները:

- Կրթական համակարգի խնդիրները բազմազան են ու բազմաշերտ: Հայկական կրթական համակարգը բազմաթիվ խնդիրներ ունի՝ սկսած խորհրդային դպրոցից, որը հիմնված է ավելի շատ տեսական գիտելիքների վրա եւ կիրառական գիտելիքներ չի տալիս: Դպրոցների դերակատարությունը մասնագիտական կողմնորոշման նախապատրաստման գործում եւ, առհասարակ, քաղաքացի կերտելու գործում բավական թույլ է: Այսօրվա դպրոցը չի կարողանում գիտելիքը որպես ինտելեկտուալ ապրանք ու արժեք մատուցել: Իհարկե, արեւմտյան դպրոցներն էլ իրենց խնդիրներն ունեն: Նույնիսկ ամենազարգացած կրթական համակարգ ունեցող երկրներն էլ քննադատվում են հենց նրա համար, որ ոչ թե գիտելիքն է կարեւորվում, այլ կարծես դպրոցները բիզնեսի են վերածվել. ուղղակի մրցակցություն է համատարած թեստերի ու տարբեր գնատահման չափանիշների միջոցով նոր աշակերտներ ձեռք բերելու համար, եւ այդ վազքը խանգարում է համապատասխան կրթական միջավայր ձեւավորելուն: Մեր կրթական համակարգի մյուս խնդիրը, իմ կարծիքով, ինստիտուցիոնալ ճգնաժամն է, երբ փորձ է արվում որեւէ երկրի կրթական համակարգ կրկնօրինակել, որը, սակայն, ձեւից բովանդակություն չի ստանում: Կարծես թե կատարվում են բազմաթիվ բարեփոխումներ կրթական համակարգում, բայց մենք ցանկալի արդյունք չենք կարողանում ապահովել: Գուցե հենց կրթական հեղափոխություն է պետք: Ուզում եմ հղում անել արեւմտյան կրթության տեսաբաններից մեկին՝ Քեն Ռոբինսոնին, ով ժամանակակից կրթական համակարգը համեմատել է ֆաստֆուդի, այսինքն՝ միօրինակության, եւ այն ռեստորանների, որոնք փորձում են սնունդը տեղայնացնել, համապատասխանեցնել տեղական հանգամանքներին: Ես կարծում եմ, որ մեր կրթական համակարգը չպետք է ֆաստֆուդի վերածենք, այլ հիմնվելով ընդունված կրթական արժեքների ու տեղական մեր յուրօրինակությունների վրա, կրթական հեղափոխություն անենք:

- Մեր օրերում շատերը, հատկապես իգական սեռի ներկայացուցիչները, խուսափում են որեւէ քաղաքական ուժի բացահայտ հարելուց: Հետաքրքիր է, ինչպես որոշեցիք դառնալ կուսակցության, հատկապես՝ ՀՅԴ-ի անդամ:

- Երեւի գաղտնիք չէ, որ Արցախում Դաշնակցությունը որոշ շրջաններում ու համայնքներում ավելի կենտրոնացված է, քան մյուսներում: Ես մեծացել եմ մի միջավայրում, որտեղ շրջապատված չեմ եղել «դաշնակցական մթնոլորտով»: Դաշնակցության մասին իմ պատկերացումներն ու հետաքրքրությունները ձեւավորվել են քաղաքականության հանդեպ հետաքրքրության հետ զուգահեռ: Այն, ինչ ես ուզում էի քաղաքականության մեջ, միշտ զուգորդել եմ եւ հիմա էլ միայն կապում եմ Դաշնակցության հետ: Միայն Դաշնակցության միջոցով եմ տեսնում բոլոր այն խնդիրների լուծումը, որոնք ծառացած են մեր երկրի առջեւ, ինչն էլ ինձ բերեց Դաշնակցություն:

- Ինչպե՞ս եք պատկերացնում կնոջ դերը քաղաքականության մեջ: Ձեր կարծիքով՝ անհրաժե՞շտ է կնոջ քաղաքական գործունեությունը:

- 21-րդ դարում նման հարցադրումը արդեն իսկ խտրականության տարրեր է պարունակում: Իհարկե, հասկանում եմ, դուք դիտարկում եք հայ կնոջ տեսանկյունից: Միանշանակ գտնում եմ, որ կինը իր հաստատուն տեղը պետք է ունենա քաղաքականության մեջ, ընդ որում՝ ոչ միայն կատարող, այլ նաեւ իր որոշումներով կարողանա ազդել քաղաքական գործընթացների վրա ու հետեւողական լինի դրանց իրագործմանը: Եվ մեր պատմության մեջ էլ ունենք հայ կնոջ արժանապատիվ, խորիմաստ ու քաջ գործունեության եւ, ինչո՞ւ չէ, նաեւ կառավարման բազմաթիվ օրինակներ:

- Մենք գիտենք, որ դուք կուսակցության բավականին ակտիվ անդամ եք, նաեւ՝ Ստեփանակերտի կոմիտեության խմբերից մեկի խմբապետը: Արդյոք հե՞շտ է համատեղել կուսակցական գործունեությունը գործնականի եւ անձնական կյանքի հետ:

- Դաշնակցության մեջ խումբն առաջին բջիջն է եւ, կարծում եմ, ամենակենսունակը պետք է լինի: Ես սա կարեւոր առաքելություն եմ համարում: Չնայած առիթ եմ ունեցել նաեւ քաղաքային կոմիտեության մեջ պատասխանատու աշխատանք ստանձնել, բայց խումբը եւ խմբի աշխատանքը համակարգելը առավել պարտավորեցնող է: Խմբում են ծնվում նոր մտքեր, գեներացվում գաղափարներ, կարծիքների բախումներ են լինում: Կուսակցության զարկերակը հենց խմբերն են, եւ պետք է շատ աշխատենք այն կենսունակ պահելու համար:

Իհարկե, հաճելի է, որ արդեն ոչ առաջին անգամ այս գործը խմբում ինձ են վստահում, եւ սա եւս կարծրատիպ կոտրելու լավ հնարավորություն է՝ հատկապես մեր ավանդական կուսակցությունում, որտեղ տղամարդիկ ավելի շատ են, ու դա շատ օբյեկտիվ է՝ հաշվի առնելով կուսակցության պատմական անցյալը, նրա առաջնահերթությունները: Բայց հենց իմ եւ իմ քաջ ու նվիրյալ կուսակցական ընկերուհիների օրինակով պետք է կոտրենք սեռերի միջեւ այդ հակակշռությունը:

Ու հաճելի է, որ մեր գալիք կուսակցական սերունդը շատ խելացի ու նվիրյալ աղջիկներով է համալրվում: Սա իսկապես կարեւոր է նաեւ հանրության ընկալման մեջ մեր կուսակցության հանդեպ զուտ տղամարդկանց կուսակցություն լինելու կարծրատիպը կոտրելու համար:

Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ապա կարծում եմ՝ չի խանգարում, հակառակը, ստիպում է, որ ավելի կազմակերպված ու պլանավորված աշխատենք:

- Քանի որ արդեն տարեվերջ է, հետաքրքիր է, ի՞նչ է տվել անցնող տարին եւ ի՞նչ ակնկալիքներ ունեք գալիք՝ 2017 թվականից:

- Անձնական առումով՝ այս տարին ինձ համար շատ կարեւոր էր: Ես նոր մասնագիտություն ստացա, եւ հույս ունեմ, որ գիտելիքներս կիրառելի կլինեն հետագայում՝ թե մեր կուսակցության մեջ տարվող աշխատանքներում, թե առհասարակ հանրության հետ աշխատելու ժամանակ: Բայց իմ հաջողությունները եւ ձախողումները անմիջական կապ ունեն իմ երկրի ձեռքբերումների ու կորուստների հետ: Այս տարին բավական մարտահրավերներ պարունակող տարի էր Արցախի համար՝ սկսած ներքաղաքական մարտահրավերներից, եւ, իհարկե, ապրիլյան պատերազմը, որը շատ մեծ հետեւանքներ ունեցավ ռազմական, քաղաքական, տնտեսական եւ, իհարկե, բարոյահոգեբանական առումով: Ցավոք սրտի, պատերազմը այն շատ թանկ գինն է, որ մենք վճարում ենք դեռեւս փխրուն խաղաղության համար: Եվ սա ամեն մեկիս պարտավորեցնում է՝ որպես քաղաքացի որոշակի դրական դերակատարության ունենալ մեր երկրի անվտանգության ու խաղաղաշինության գործում:

- Շնորհակալություն հետաքրքիր եւ բովանդակալից զրույցի համար:

Հարցազրույցը՝
Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

Մի քիչ խենթ ու անսահման բարի

Շատ աշխատասեր ու շատ համեստ, մի քիչ տարօրինակ ու անհանգիստ, մինչեւ ուղնուծուծը գործին նվիրված՝ այսպես կարելի է բնութագրել Գագիկ Միրզոյանին՝ «Զարկերակ» երաժշտական ստուդիայի հիմնադիր ու գեղարվեստական ղեկավար, բոլորի կողմից սիրված Գագային: Իր ասելով՝ ստուդիայի ստեղծումը նպատակ է ունեցել մանուկների ու պատանիների մոտ սեր սերմանել դեպի երաժշտությունը, սովորեցնել գրագետ երգել ու տիրապետել նախընտրած երաժշտական գործիքին, օգնել նախապատրաստվել ընդունվելու երաժշտական որեւէ հաստատություն: Աշակերտներից ամենափոքրը 4 տարեկան է: Իսկ Անանա Առուշանյանը, ով միջազգային մի շարք մրցույթների դափնեկիր է, իրեն աշակերտել է 2 տարեկանից:

Նյութական արժեքների գերակայման ժամանակակից աշխարհում դժվար է այնպիսի էնտուզիաստներ գտնել, որոնք առանց որեւէ շահի կարողանան «գործին կպնել»: Սովորաբար այդպիսիներին «խենթեր» են անվանում: Գագիկը՝ «դյադ Գագան», հենց այդպիսի խենթերից մեկն է: Նրա աչքերից կայծեր են ցայտում, երբ իր ուսանած աշակերտները տիրապետում են սիրած նվագարանին:

Գագիկ Միրզոյանը 1981 թվականին տեղափոխվել է Ստեփանակերտ, ուր հրավեր է ստացել աշխատելու Յուրի Դավիդովի ղեկավարած՝ Ղարաբաղի երգի-պարի պետական համույթում՝ որպես ակորդեոն նվագող: Մինչեւ 1993 թվականն աշխատել է այս համույթում: Մասնակցել է Մարտակերտի ազատագրմանը: 92-ին վիրավորվել է, սակայն, իր համեստ բնավորությամբ, այդ մասին խոսել չի սիրում: Երեխաների ծնողները, ուսուցիչները, տնօրենները նամակով դիմել են պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով Գագիկին ազատել ծառայությունից, քանի որ երեխաների հետ պարապող չկար: Պատերազմ էր, բոլոր տղամարդիկ ռազմի դաշտում էին:

1993-ից մինչեւ 2000 թվականը մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի գեղարվեստական ղեկավարն էր: 2000-ից՝ Մշակույթի քաղաքային տան տնօրենն է: Հենց 2000 թվականից էլ կամաց-կամաց սկսեց զբաղվել «Զարկերակ» մանկապատանեկան ստուդիայի ստեղծման աշխատանքներով: Սկզբում ստուդիան դիոլահարներ էր պատրաստում, քանի որ դիոլահարների կարիք շատ ունեին: Նրա աշակերտներից ոմանք արդեն իրենք են աշակերտների հետ պարապում:

Գագիկին կարելի է տեսնել ամենուր՝ մեկ Շուշիում, մեկ Այգեստանում, մեկ Տողի արվեստի դպրոցում, ուր նա աշխատում է որպես խմբավար: Տողի արվեստի դպրոցում դիոլի դասարան ունի: Հիմնական մասնագիտությունն ակորդեոնն է, բայց նույն վարպետությամբ նվագում ու դասավանդում է դիոլ, դաշնամուր, կիթառ, փողային նվագարան: Գագիկ Միրզոյանն այժմ «Թումո» ստեղծարար կենտրոնում եւ Վերականգնողական կենտրոնում (սահմանափակ կարողություններով երեխաների համար) ցանկանում է համույթներ ստեղծել: Ընդհանրապես, հեռավոր գյուղերում, օրինակ՝ Մարտակերտի Վաղուհասում, Հադրութի ծայրամասային Վարդաշատում մշակույթը զարգացնելու նպատակ ունի Գագիկը: Ստուդիայում հիմնականում նրա հայթայթած գործիքներն են, հովանավորի խնդիր կա ժողգործիքների ձեռքբերման համար: Խնձրիստանի «Սոսե» մանկապարտեզում երեխաներին սովորեցնում է երաժշտական ցերեկույթներ կազմակերպել, Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում սովորող սաներին օգնում է սեփական երաժշտական կոլեկտիվ ստեղծել: Պարզապես, իր գործին նվիրված մարդը երեխաների հետ աշխատելը հաճույք է համարում:

Գագիկ Միրզոյանը երազում է 3-4 տարի հետո ստուդիան տեսնել ավելի բարձր մակարդակի՝ արդեն որպես պետական:

Լիլիա ԲԱԴՐՅԱՆ

Հուշեր ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի կյանքից

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Առանց Արթուրի

Արթուր Մկրտչյանի՝ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելն անսպասելի էր ինձ համար: Խոստովանեմ, որ ուրախության հետ ինչ-որ ահ կար իմ սրտում: Վախ ներշնչողը քաղաքական գործչի փորձի պակասն էր: Օրեր էի հաշվում նրա հետ նոր հանդիպման համար: Նպատակս մեկն էր՝ խնդրել նրան, որ զգուշավոր լինի ամեն մի հարցում:

Ավա՜ղ, այդ հանդիպումը չկայացավ: Փոխարենը նրա մահվան բոթն առա ու ամբողջ հոգով սարսռեցի: Հավատս չէր գալիս, որ Արթուրն այլեւս չկա, մինչեւ մասնակիցը չեղա նրա հուղարկավորության արարողությանը:

Արթուրի մահվանը գումարվեց նաեւ նրա մոր խռովքն ինձանից: Նա այս խոսքերը նետեց իմ երեսին.

- Որդուս մահվան պատճառը դու ես: Դու ես եղել նրան քաղաքականության մեջ ներքաշողը:

Այդ խոսքերն էլ իր հետ տարավ գերեզման՝ ինձ թողնելով մեղսակից:

Մի քանի տարի անց նրա հիմնադրած թանգարանին կից հրապարակում պատվանդան բարձրացավ նրա կիսանդրին: Բացման օրը իմ այս բանաստեղծությունն արտասանեցի՝ նվիրված իմ անմոռաց սանին.

Դու աշխարհ եկար Արցախի տենչով,
Կանչով Արցախի
Ծավի աչքերիդ կրեցիր ակնոց.
Որ ողջ խորությամբ տեսնես ու ապրես
Քո խաչված երկրի բախտը արյունոտ:
Նորօրյա Վարդան ու Խորենացի դարձար մեզ համար,
Պայքարի հրով վառեցիր ողջիս
Ու տարար մարտի...
Մեր Ավարայրը դարձավ հաղթության նորընծա վկա,
Ավա՜ղ, առանց քեզ:
Երեք տասնամյակ:
Այս է քո կյանքի եղած հաշվարկը:
Կայծակի նման շողացիր անցար.
Բայց հերիք եղավ թողած վաստակդ՝
Հետմահու կյանքով փառքիդ ապրելու:
Ապրիր, ապրողին շունչ պարգեւելով.
Հավատի գահը նրան բաշխելով:
Վայելիր փառքդ, երբեմնի իմ սան,
Այն իմն է նաեւ իմ սուրբ գաղտնությամբ:

Ավարտելով հուշերս՝ մի միտք է պաշարում ինձ՝ անել ամեն ինչ, որ մեր Արթուրի ապրած կյանքը օրինակ ծառայի ամեն հայ պատանու, ոգեշնչի նրան՝ նման ազգանվեր կյանքով ապրելու: Այո՛, հուշը հուշ է դառնում այն ժամանակ, երբ հայրենասիրության դաս է դառնում մատաղ սերնդի համար:

Այս ամենով հանդերձ՝ ես իմ խղճին պարտական կմնայի, եթե այս ամենին չհավելեի երկու հուշակտոր կնոջ՝ Գոհարի պատմածից:

***

Պատերազմի թեժ օրերն էին: Քանի որ իմ ծնողները Հայաստանում էին ապրում, մի օր դիմեցի Արթուրին.

- Արի երեխաներին ուղարկենք իմ հերանց տուն, մինչեւ վտանգը կնվազի գոնե:

- Ոչ մի դեպքում,- ասաց Արթուրը,- մենք ուղարկեցինք, բա նրա՞նք, ովքեր ուղարկելու տեղ չունեն, նրանք ինչ պիտի անեն: Որտեղ մենք, այնտեղ էլ մեր երեխաները, - կարճեց նա:

***

- Թեժ մարտեր էին գնում Սարի գյուղում: Արթուրը իր ընկերների հետ օգնության գնաց: Եվ երբ օրը խաղաղվեց, տուն դարձավ հոգնած, թրջված ու ցեխոտ: Մայրը այդ տեսնելով՝ մի տեսակ սրտնեղած ասաց.

- Այ բալա, բա ես քեզ պահել, մեծացրել, ուսում եմ տվել՝ այն էլ բարձրագույն, որ այդ վիճակում լինես:

- Մա,- ասաց նա,- մոռացել ես, որ դու Մոնղոլիայում ես կռվել: Ասա, տեսնեմ ո՞ւմ համար ես կռվել, ո՞ւմ ես պաշտպանել: Իսկ ես մեր հողն ու երկիրն եմ պաշտպանում:

- Այս խոսքերից մայրն ասես մի տեսակ խեղճացավ ու անգամ փոշմանեց իր ասածից:

Միքայել ԽԱՉՅԱՆ

Ստեփանակերտի Հովհաննես Թումանյանի անունը կրող դպրոցը

Դպրոցը մի փոքրիկ հոգեւոր հայրենիք է, ուր հայ աշակերտն ամեն օր հաղորդության մեջ է մտնում իր անցյալի, հայրերի եւ նրանց ժառանգություն թողած ավանդույթների ու սովորությունների հետ՝ այդպիսով ստանալով հայեցի դաստիարակություն:

Ստեփանակերտի Հովհաննես Թումանյանի անվան դպրոցը գործում է 1974թ. սեպտեմբերի 1-ից՝ գիշերօթիկի հիմքի վրա: Կազմավորման ժամանակ դպրոցը երկարօրյա էր, մաթեմատիկայի թեքումով:

Սկզբնական շրջանում դպրոցը Կարկառ գետի ափին գիշերօթիկից ժառանգած այգի-բանջարանոց ուներ: Այն խնամվում էր դպրոցի աշակերտների ուժերով: Ստացված բերքի մի մասն իրացվում էր երկարօրյա խմբի երեխաների ճաշացանկում, մյուս մասի բերած եկամուտով հոգում էին դպրոցի հոգսերը:

Դպրոցի տնօրեն Արթուր Անտոնյանի տեղեկացմամբ՝ 1974թ. ի վեր շենքը կապիտալ վերանորոգման չի ենթարկվել: Այժմ դպրոցում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ, որոնք սկսվել են 2015թ. օգոստոսից: Վերանորոգման եւ բարեկարգման աշխատանքները կատարվում են «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ Արեւմտյան շրջանի տեղական մարմնի (բարերար Ջերալդ Թրփանջյան) ֆինանսավորմամբ եւ ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Տնօրենի փոխանցմամբ՝ նախատեսվում է 2018թ. սեպտեմբերին պարապմունքները սկսել նոր պայմաններում: Այս տարի կավարտվեն մասնաշենքերից մեկի շինարարական աշխատանքները, կտեղափոխվեն այնտեղ՝ մինչեւ մյուս մասնաշենքի վերանորոգման աշխատանքների ավարտը:

Ստեփանակերտի Հովհաննես Թումանյանի անունը կրող հիմնական դպրոցը միակն է հանրապետությունում, որտեղ իրականացվում է ներառական կրթություն ուսուցման հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար: Նշված դասարանը գործում է 2010-ից: Այժմ այնտեղ սովորում է 9 աշակերտ, որոնց դասավանդում են՝ հատուկ մանկավարժ, լոգոպեդ, հոգեբան, լսողական եւ խոսքի խնդիրներ ունեցողների համար հատուկ թարգմանիչ: Մասնագիտությամբ դեֆեկտոլոգ, հոգեբան Սուսաննա Հայրապետյանն աշխատում է ուսուցման հատուկ կարիք ունեցող աշակերտների հետ, նաեւ դասավանդում Արցախի պետական համալսարանում: Նշում է, որ աշակերտների հետ աշխատելու ընթացքում մի շարք դժվարությունների առաջ են կանգնում: Ներառական կրթություն ստացող աշակերտների մեծ մասը հաշմանդամություն ունի, դպրոցն էլ ծայրամասային է. կան Շուշիից, Նորագյուղից ժամանող աշակերտներ: Այս հանգամանքը հաշվի չի առնված: Ցանկալի կլիներ լուծել տրանսպորտի հարցը, հաշվի առնել ուսուցման հատուկ պայմաններ պահանջող երեխաների առանձնահատկությունները եւ, ըստ այդմ, համապատասխան ծրագիր մշակել: Շարժվում են հանրակրթական դպրոցի ծրագրով ու դասագրքերով, նյութատեխնիկական բազան չի թարմացվում: Այդ պայմաններում աշակերտների ուսուցման համար անհրաժեշտ միջոցները մանկավարժներն են պատրաստում, կամ, լավագույն դեպքում, հովանավորների կողմից ստանում:

Կրթօջախում ներկայումս ուսանում է 395 աշակերտ, նաեւ 36-ը՝ նախադպրոցական խմբում: Նախորդ տարվա հետ համեմատած՝ դպրոցի աշակերտների թիվն աճել է, իսկ նախադպրոցական խմբինը՝ նվազել: Մինչ շինարարական աշխատանքներ են ընթանում դպրոցի առաջին եւ երկրորդ մասնաշենքերում, սաները ժամանակավորապես ուսանում են երրորդ մասնաշենքում:

Դպրոցի շրջանավարտներն ակտիվորեն մասնակցել են Արցախյան ազատագրական պայքարին: Ցավոք, շրջանավարտներից 50-ը զոհվել են հայրենիքի ազատագրության համար: Նրանց հիշատակը հավերժացնելու համար կրթօջախում բացվել է փառքի սրահ:

Ի դեպ, ապրիլյան պատերազմում հայտնի դարձած Մարատ Պետրոսյանը, ով թշնամու 5 տանկ եւ 1 ՀՄՄ է խոցել, դպրոցի շրջանավարտ է: Սանդա-ուշու մարզաձեւում Եվրոպայի չեմպիոն է, Ռուսաստանում անցկացված բռնցքամարտի միջազգային մրցաշարի հաղթող: Նրա հայրը՝ Ալբերտ Պետրոսյանը, Արցախյան ազատամարտի մասնակից է: Մարտական ուղին սկսել է 9-րդ դպրոցի ջոկատից, եղել Մարտակերտի հետախուզական ջոկատի փոխհրամանատարը: Իսկ մայրը՝ Լիանա Պետրոսյանը, դպրոցի տնտեսվարն է:

Դպրոցի տարրական խմբի մանկավարժ Սուսաննա Մելքումյանն այստեղ աշխատում է 1988-ից: Իր բազմամյա աշխատանքային գործունեության ընթացքում կրթել ու դաստիարակել է ազգին պիտանի մարդիկ, եւ այժմ էլ դպրոցը համարում է իր կյանքի աղբյուրն ու ոգեւորության առարկան: Մեծ ցավով է տանում դպրոցի աշակերտների, ուսուցիչների հետ կապված ցանկացած դժբախտություն:

Դպրոցը լուրջ հաջողություններ է ունեցել եւ այժմ էլ ունի հանրապետական առարկայական օլիմպիադաներում: Բարձր հիմքերի վրա են հատկապես մաթեմատիկա, աշխարհագրություն, ռուսաց լեզու առարկաների ուսուցումը, նաեւ՝ մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Դպրոցի թիմը մասնակցել է «Հայ ասպետ» խաղ-մրցույթի հանրապետական փուլին եւ գրավել առաջին մրցանակային տեղը:

Լավ հիմքերի վրա է դպրոց-բանակ համագործակցությունը: Դպրոցը սերտ համագործակցության մեջ է Ստեփանակերտում տեղակայված 8-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի հետ: Դպրոցի աշակերտները հաճախակի են համերգներով հանդես գալիս զորամասում:

Դպրոցը կրթել է բազում անվանի շրջանավարտների՝ բժիշկներ, պատգամավորներ, պետական տարբեր ոլորտների պատասխանատուներ, աշխարհի, Եվրոպայի չեմպիոններ: Ի դեպ, Պաշտպանության բանակի հրամանատար Լեւոն Մնացականյանը եւս այս դպրոցի շրջանավարտ է:

Կրթօջախի ուսուցիչները հպարտությամբ են խոսում հատկապես իրենց աշակերտների մարզական հաջողությունների մասին: Դպրոցն ունի Եվրոպայի, աշխարհի բազմակի չեմպիոն շրջանավարտներ: Դպրոցում են սովորել սանդա-ուշու մարզաձեւի աշխարհի երկակի չեմպիոն Վարդգես Մանասյանը, Եվրոպայի եռակի, աշխարհի չեմպիոն Դավիթ Պետրոսյանը, Եվրոպայի չեմպիոն Հայկ Խաչիյանը:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան